«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Գրական ունկնդրման և ինքնուրույն ընթերցանության դասերի արդյունավետ կազմակերպումը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Աննա Սուվարյան

ՄԱՐԶ Շիրակի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Նահապետավանի միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3
2. ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ, ԴՐԱՆՑԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ……5
3. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ……10.
4. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ ……11
5. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ ……13
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..20
7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոց ընդունվելը ցանկացած երեխայի կյանքում բեկումնային շրջափուլ է նշանավորում: Այն կտրուկ փոխում է երեխայի ապրելակերպը: Անհոգ, խաղերով տարվելու սովորույթը փոխարինվում է պահանջների և պարտականությունների կատարմամբ մի առօրյայով:

Կյանքի այս շրջանում՝ 6 տարեկան հասակում, փոխվում է երեխայի հոգեբանական ամբողջ նկարագիրը, շփումների, հույզերի և ապրումների ոլորտը, վերակազմավորվում է նրա անձը, մտավոր և ճանաչողական կարողությունները: Իսկ դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ երեխան ազատ է, անկաշկանդ, չի վախենում սխալվելուց, համարձակ արտահայտում է իր մտքերը, կարծիքներն ու զգացողությունները և կարողանում է դրսևորել համարժեք վարքագիծ: Քանի որ մարդու մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում, պետք է ամենայն պատասխանատվությամբ մոտենալ այդ գործին և գտնել ու կիրառել ուսուցման արդյունավետության բարձրացման տարբեր մեթոդներ:

Այդ գործին մեծապես օգնում է <<Գրական ունկնդրում և խոսք>> դասաժամերի ճիշտ, հետաքրքիր և նպատակային կազմակերպումը:

Վեցամյա դպրոցականը, ով դեռ չունի կարդալու կարողություններ, գրական ստեղծագործությունների ունկնդրումը գրականության նկատմամբ կայուն հետաքրքրություն և սեր ձևավորելու աղբյուր է, խոսքի և երևակայության զարգացում, ընթերցանության կարողության փորձի կուտակում:

Եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդական ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի զարգացման միջոց:

Անշուշտ, ընթերցանության միջոցով լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք հատկանիշների դաստիարակում:

Կրտսեր դպրոցականը, ընթերցելով և վերլուծելով գրական ստեղծագործությունները, խորհրդակցում է ճշմարիտի և սխալի, բարու և չարի, սիրո և ատելության, մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես նպաստում է գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցանությունը, իսկ ուսուցիչը այդ գործընթացում ուղորդողի դեր է կատարում:

Գրականությունն այսօր և՞ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՞ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է համարվում, որը սնում է մարդու հոգեկան աշխարհը:

Մանկական տարիքում ավելի բուռն կերպով են ձևավորվում այդ բարոյական համոզմունքներն ու սկզբունքները: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների սերն ու հետաքրքրությունը, զարգացնել գեղեցիկի, գրական խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:

ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

<<Գրական ունկնդրում և խոսք>> դասաժամերը նախաայբբենական շրջանում տրվում է շաբաթական մեկ ժամ, այբբենական շրջանում՝ երկու շաբաթը մեկ ժամ, հետայբբենական մեկ ժամ: Ուսումնական աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններից մեկ էլ այդ դասաժամերի կազմակերպման խնդիրներն ու մեթոդներն են:

Սովորաբար վեցամյա առաջին դասարանային գեղարվեստական գրականության հետ շփվելու մեծ փորձ է ունենում, քանի որ ծնողներն ու մեծահասակները նախադպրոցական տարիքում երեխաների համար շատ են կարդում: Երեխաների հետաքրքրությունը գրքի նկատմամբ չի թուլանում նաև դպրոց հաճախելու առաջին տարիներին:

Կրտսեր դպրոցականի մոտ գրքի նկատմամբ ունեցած հետաքրքրության պահպանման և զարգացման հարցում մեծ դեր ունեն գրական ունկնդրման դասերը:

Անշուշտ այս դասերի գլխավոր նպատակը գրական տեքստի ընկալմանը վարժեցնելն է, որն համարվում է մի յուրատեսակ ձև, որին մասնակցում են հոգեկան մի շարք գործընթացներ՝ խոսք, մտածողություն, երևակայություն: Գեղարվեստական ընկալումը ոչ միայն ստեղծագործությունը լսելու կարողությունն է, այլև <<լսել, ընդունել>> այն, ինչ ցանկացել է ասել հեղինակը: Դա ոչ միայն սյուժետային գծի փոփոխություններին, զարգացումներին հետևելու կարողությունն է, այլև ենթատեքստը, գործող անձանց փոխհարաբերությունները հոգու աչքերով տեսնելու և ականջներով լսելու ու հասկանալու հնարավորությունը:

Քանի որ կրտսեր դպրոցականը գրքի հետ շփման և կարդալու կարողություններ չունի, գրական ստեղծագործությունների ունկնդրումը դառնում է կայուն հետաքրքրություն ձևավորելու աղբյուր, ընթերցողական կարողության փորձի կուտակում, խոսքի և երևակայության զարգացում, ստեղծագործական կարողությունների մշակում: Բացի դրանից, գրքի հետ նման շփումը դառնում է բարոյականության և բարեկրթության առաջին լուրջ դպրոցը:

Գրական ունկնդրման ժամերի կազմակերպման ձևերը բազմաբնույթ են.

- գրական ունկնդրման դասեր,
- սովորողների զանգվածային արտադասարանային գործունեություն՝ կապված ընթերցանության հետ (գրական ցերեկույթների, վիկտորինաների նախապատրաստում, գրքերի ցուցահանդեսներ, դասարանային գրադարանի ստեղծում և այլն),

- սովորողների ընթերցանության ուղղությամբ քարոզչություն ընտանիքներում,
- օգնություն՝ երեխաների անձնական գրադարանների ստեղծման գործում,
- գրական ստեղծագործությունների ունկնդրում համացանցով:

Այսօր պետք է ընդունենք այն փաստը, որ վեց տարեկան երեխան էլ է տիրապետում համակարգչային տարրական գիտելիքների: Ինչպես երեխաների, այնպել էլ մեր առօրյան անհնար է պատկերացնել առանց համացանցի, քանի որ նորագույն տեխնոլոգիաները դառնում են մեր կյանքի անբաժան մասը: Անշուշտ սա առաջընթաց է, բայց առկա է նաև այդ երևույթի բացասական կողմը. Երկրորդ պլան է մղվում գիրքը, նվազում է գրքի նկատմամբ սերն ու հետաքրքրությունը: Բայց պետք է փաստել, որ վեց տարեկան երեխան սիրում է լսել, հաղորդակցվել գրականության հետ: Մեր նպատակը պետք է համարել այդ սերն ու հետաքրքրությունը զարգացնելը և խորացնելը:

Ժամանակն առաջ է շարժվում: Թ՜ե տանը, թ;ե դպրոցում փոխվում է ամեն բան. Փոխվում են նաև ուսուցման և դաստիարակության սկզբունքներն ու խնդիրները: Ժամանակակից երեխաների մտածողությունը, ցանկություններն ու հետաքրքրությունները ստիպում են ուսուցչին գիտակցաբար քայլել արդիականության հետ, առաջնորդվել ժամանակի պահանջներով: Երեխաներին պետք է ուսուցանել և դաստիարակել առանց հարկադրանքի և ճնշումի, քանի որ բռնությունն առաջ է բերում հիասթափություն, անտարբերություն և ատելություն: Անհրաժեշտ է մանուկների համար դպրոցը դարձնել աշխատելու և սովորելու համար առավել հաճելի ու նպաստավոր վայր:

Բարձր մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչը պետք է տիրապետի սովորելու և սովորեցնելու արդի մեթոդներին և զբաղվի ինքնակրթությամբ: Ուստի երեխայի ուսուցումը պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա է ընկալում աշխարհը՝ գունագեղ, հստակ ու մատչելի: Մարդը չի կարող յուրացնել այն, ինչը չի հասկանում, ուստի ուսուցչի խնդիրն է՝ հենց նախաայբբենական շրջանից աշակերտի մեջ սերմանել հետաքրքրություն գրքի և ընթերցանության հանդեպ: Առաջին դասարանային սիրով ունկնդրում է գեղարվեստական ստեղծագործությունները և դրանք յուրովի նկարազարդում:

Երբ նյութը ընթերցվում է ճիշտ, հուզիչ ու գրագետ, փոքրիկի առջև բացահայտվում է գեղարվեստական խոսքի հմայքն ու կախարդական ուժը:

Դրանք բովանդակալից են դարձնում մայրենիի ժամերը և հաճույք պատճառում երեխային:

Տարիներ առաջ ուսուցիչն ինքն էր փնտրում և ընտրում ունկնդրման նյութերը, իսկ այսօր մեզ օգնության են հասնում բազմապիսի ամսագրեր, ժողովածուներ, էլեկտրոնային շտեմարաններ, գրական ունկնդրման համար նախատեսված գրքեր: Իսկ ձևավորված հաղորդակցական կարողություններն ու գիտելիքները օգնում են ճիշտ, տեղին և դիպուկ արտահայտվել, լսել խոսակցին, ունկնդրել, ընկալել, այսինքն դառնալ ակտիվ ունկնդիրներ:

Գրական ունկնդրման դասերն առանձնացվում են ընթերցանության համար նախատեսված ժամերից և արտացոլվում են դասամատյանում:

Ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումն սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում է փուլ առ փուլ.

I փուլ՝ /նախապատրաստական/ 1-ին դասարան, երբ աշակերտները դեռևս նոր են գրաճանաչ դառնում.

II փուլ՝ /հիմնական/ 2-րդ դասարաններ:

Նախապատրաստական փուլում անհրաժեշտ է առաջին դասարանցիների մեջ արթնացնել գրքի նկատմամբ հետաքրքրություն, ամեն օր, յուրաքանչյուր ազատ ժամ գրքով զբաղվելու ձգտում: Ձեռք են բերվում գրքից օգտվելու գործնական գիտելիքներ և կարողություններ:

Այս փուլում աշխատանքը կազմակերպվում է հետևյալ կերպ: Պարբերաբար, շաբաթական մեկ անգամ, որոշակի օր ու ժամ երեխաներն ունկնդրում են ծավալով ոչ մեծ հեքիաթներ և պատմվածքներ, որոնք ընթերցում է ուսուցիչը: Երեխաները ունկնդրում են հեքիաթում տեղի ունեցած դեպքերը, առանձնացնում մանրամասները, ծանոթանում հերոսներին, հիշում ոչ միայն նրանց անունները, այլև վարքը, գործողությունները: Սովորաբար ընթերցվող հեքիաթներն ընտրվում են ոչ թե գրողների հատորյակից, այլ հատուկ երեխաների համար հրատարակված առանձին գրքույկներից: Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցիչը գիրքը փոխանցում է երեխաներին և թույլ տալիս, որ նրանք բռնեն գիրքը, թերթեն, դիտեն կազմը, նկարազարդումները: Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է գրքի կազմի վրա, ցույց տալիս և կարդում գրքի վերնագիրը: Հեքիաթի անվանումը և հեղինակի անունը ուսուցիչը կրկնել է տալիս երեխաներին: Ուսուցիչը կարդում է առանձին նկարազարդումների տակ գրված տողերը, մղում նրանց համապատասխան հատվածը հասկանալու, դեպքերի և հերոսների մասին պարզ դատողություններ անելու և այլն: Այնուհետև հանձնարարվում է մտապահել ընթերցած գրքի վերնագիրը, անձնական գրադարանում փնտրել, գտնել և դպրոց բերել նմանատիպ այլ գրքեր: Կարելի է կազմակերպել փոքրիկ ցուցահանդեսներ:

Գրական ունկնդրման ուղղությամբ աշակերտների կատարած աշխատանքը ոչ միայն վերահսկվում է, այլև գնահատվում: Այդ ձևավորող գնահատումը անելիս պետք է հաշվի առնել՝

ա) գրքում կամ գրքերում երեխայի կողմնորոշման ճշտությունը և դրա շարժառիթային ընթերցողական շրջանակները,

բ) կարդացածի շրջանակները, ճշտությունը, եզրակացությունների զգացմունքայնությունն ու դատողությունները,

գ) աշակերտների՝ որպես ընթերցողների բերած հասարակական օգուտը, մասնակցությունը դասարանական գրադարանի, քարտարանների, ցուցահանդեսների ստեղծման աշխատանքներին, գրական ունկնդրման դասերին նախապատրաստվելիս ընկերներին ցուցաբերած օգնությունը, դասարանային գրքերի վերանորոգման աշխատանքներին և այլն:

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերը պլանավորելիս անպայման պետք է նկատել

- սովորողների պատրաստվածության մակարդակը
- տեղանքի առանձնահատկությունները /ծնողների սոցիալական վիճակը, մշակույթի օջախներից դպրոցի հեռավորությունը, դասարանի առկա ֆոնդը,
- երեխաների հետաքրքրությունների շրջանակը:

Այս բոլոր նկատառումների պահպանումը անշուշտ բերում է դասի արդյունավետության բարձրացմանը, իսկ վերջինիս լիակատար հաջողությունը պայմանավորված է առանձին ստեղծագործությունների ճիշտ ընտրության պայմանների հաշվառմամբ.

1) Առավելապես ընտրվում են այնպսի գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք բազմակողմանիորեն կնպաստեն երեխաների անձի, մտքի, երևակայության ու զգացմունքների զարգացմանը և անհրաժեշտ մարդկային որակական հատկանիշների ձևավորմանը:

2) Ընտրված նյութը ծավալով պետք է լինի փոքր կամ միջինին մոտ, բարձրաձայն կարդալու համար ունենա 3-5 րոպե տևողություն, լինի մատչելի, հոգեհարազատ, հասկանալի գաղափարով, նախաբանը՝ հետաքրքրաշարժ, լեզուն պարզ, ավարտը՝ ըմբռնելի: Բնագիրը պետք է բավարարի աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները և խթանի նրանց մտահորիզոնի զարգացումը:

3) Գրական ունկնդրման համար ընտրված գրքերը իրենց կառուցվածքով և գեղարվեստական ձևավորմամբ պետք է լինեն այնպիսիք, որ գրավի նոր դպրոց

ընդունված վեցամյա երեխային թ'ե նկարազարդումներով, թ'ե հերոսների կերպարային նկարներով:

Գրական ունկնդրման դասերի կառուցվածքը ենթարկվում է ընդհանուր ուսուցողական օրինաչափություններին, առարկայական չափորոշիչներին, պարապմունքների նպատակներին և նյութերի առանձնահատկություններին: Առաջին դասարանի 1-ին կիսամյակում, այսինքն՝ նախապատրաստական փուլում գրական ունկնդրման դասն պետք է ունենա հետևյալ բաղադրիչները.

1) Հակիրճ ներածական մաս:

Խոսքային վարժություններ. /2-3ր/

Քանի աշակերտները դժվարությամբ են անցում կատարում ուսումնական գործունեության, ապա խոսքային վարժություններով ներգրավել ակտիվ մտավոր աշխատանքի մեջ: Զրույցով և դիտողական նյութերի ցուցադրումով ներկայացնել ընթերցվող նյութի վերնագիրը:

2) Ծանոթություն նոր նյութին. /3-7ր/

Ուսուցչի կողմից գրական նյութի հնարավորինս արտահայտիչ ընթերցում:

3) Գրական ստեղծագործության ընկալման գործընթաց. /4-6ր/

Կազմակերպել ունկնդրածի կոլեկտիվ քննարկում: Աշակերտներին ճիշտ և հստակ ուղորդել դեպի անծանոթ իրավիճակները, որպեսզի նրանք կարողանան ներթափանցել տվյալ հերոսի ներքնաշխարհը, ընկալել նրա վարքագծի դրդապատճառները:

4) Ստեղծագործության բովանդակության ընկալմանը միտված աշխատանքներ: Գրքի դիտարկում: /3-4ր/

Աշակերտների սկզբնական ընկալումից հետո, աշակերտների ակտիվմասնակցությամբ կազմել ստեղծագործությունը վերարտադրելու պլան-սխեմա՝ պահպանելով գործողություններ զարգացման ընթացքը: Սա դժվար տրվող հմտություններից է, քանի որ այն իր մեջ ներառում է բովանդակային ընկալում, մտքերի արտահայտում և բնագրին համապատասխան բառերի կիրառում:

5) Դասարանային և անձնական գրադարանից օգտվելու մասին ցուցումներ:

Ցանկալի է՝ վեց տարեկան երեխաների համար գրական ունկնդրման ժամերն կազմակերպել դպրոցի համար անսովոր իրավիճակում՝ դասասենյակի մի անկյունում՝ գորգի կամ փոքր բարձիկների վրա նստած: Բացի այն, որ նման կերպ երեխաները կթոթափեն ուսումնական լարվածությունն ու հոգնածությունը, այլև այս հնարը կստեղծի որոշակի հուզական մթնոլորտ և տրամադրություն գրական ստեղծագործության ունկնդրման և ընկալման համար:

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Տեքստի հիմնական գաղափարը հասկանալն ու առանձնացնելը ամենակարևոր հմտություններից է, իսկ տեքստի կառուցվածքային-իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ տարբերակելը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար:

Ուսուցումը տեղի չի ունենում որևէ բան կարդալով կամ պատմելով: Աշակերտը կարիք ունի ոչ միայն գիտելիքների և տեղեկությունների, նաև մտածողության, տեղեկատվության, մշտական և համագործակցային հմտությունների:

Գրական ունկնդրման ժամերի համար մայրենիի ուսումնական ծրագիրը ներկայացնում է հետևյալ պահանջները.

- Ունկնդրել և ուսուցչի օգնությամբ վերարտադրել հեքիաթներ, բանաստեղծություններ, պատմվածքներ:
- Կարծիքներ, առաջարկություններ և տպավորություններ փոխանակել ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ:
- Հետևել գրական ստեղծագործության դեպքերի զարգացմանը, հերոսների փոխհարաբերությունների և դրանք վերարտադրել նմանությամբ կամ ստեղծագործաբար:
- Նկարել ունկնդրած ստեղծագործության թեմայով, աշխատել բնական բնյութերով և մեկնաբանել կատարած աշխատանքները:
- Բեմականացնել ստեղծագործություններ և մասնակցել հագուստի, դեկորների ընտրությանը և ձևավորմանը:
- Պատմել ըստ հիշողության կամ նկարի:
- Շարադրել շնորհավորանքներ, ցանկություններ, մաղթանքներ, նամակներ, խոսքի մեջ օգտագործել բանահյուսական մատչելի ասույթներ:
- Ընթերցել հումորային ստեղծագործություններ, պատմել զվարճալի դեպքեր սեփական կյանքից և շրջապատող մարդկանց կյանքից:
- Ընթերցել տարաբնույթ նյութեր, քննարկել խմբերում, սեփական կենսափորձից մտաբերել նման օրինակներ:
- Ունկնդրել գեղարվեստական արձակ և չափածո ստեղծագործություններ, դրանք ակտիվորեն քննարկել խմբերում ըստ իմաստի և բովանդակության, նաև հեղինակի ասելիքի հարցերը:
- Ստեղծել դասարանական գրադարան:
- Կազմակերպել մանկական նկարների և ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսներ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեխաների կենսափորձը ակտիվացնելու համար պետք է ընտրել ճիշտ և նպատակային խոսքային վարժություններ: Ուսուցման այդ փուլում ներկայացված պատկերները պետք է փոխկապակցված լինեն տեքստի բովանդակության հետ: Դրանք նախապես գրվում են վահանակների վրա /մի կողմում/, իսկ մյուս կողմում դրվում են նկարները՝ պատասխանները:

Աքաղաղ

Հավատարիմ

Ուժեղ

Բարի

Շուն

Գող

Խորամանկ

Խարդախ

Աղվես

Ազնիվ

Միամիտ

Լսող

Ակնկալվող պատասխանները լսելուց հետո հանձնարարվում է իրենց պատկերացմամբ բնութագրել այդ կենդանիներին ու թռչունին:

Որպես ֆիզկուլտ դադար կազմակերպվում է ակտիվ խաղ, աշակերտները պետք է ինչ-որ շարժումով ու ձայնով նմանակել վերը նշված հերոսներին:

Հանձնարարվում է բացել Հ. Թումանյանի հեքիաթների ժողովածուն, ծանոթանալ ցանկին և փորձել գուշակել, թե որ հեքիաթն ենք ընթերցելու: Կարելի է նաև հողող հարցերով ուղորդել ընտրությանը:

Ընթերցանությունը սկսում ենք անհատական մոտեցում ցուցաբերելով: Թույլ մտավոր կարողություններ ունեցող աշակերտներին հանձնարարվում է կարդալ վերնագիրը և խորհել, թե ինչի մասին կարող է լինել հեքիաթը: Միջին կարողություններ ունեցող աշակերտները ընթերցում են մի հատված: Ուժեղներին հանձնարարվում է ընթերցել ամբողջը և մտածել գրատախտակին գրված բառերի բացատրությունը: Նախապես գրատախտակին գրված բանալի բառերից օգտվելով՝ հանձնարարել վերարտադրել ընթերցված հեքիաթը:

Դասարանը բաժանվում է երեք խմբի: Առաջին խումբը մտածում է նոր վերնագիր, երկրորդը փոխակերպում է հերոսներին այլ կենդանիներով, երրորդ խումբը մտածում է ավարտ:

Լսվում և քննարկվում են բոլոր խմբերի պատասխանները: Խրախուսվում են բոլորը:

Դասի ամփոփման փուլում կատարվում է հեքիաթի հիմնական իմաստի վերհանում: Կարելի է կիրառել <<Քառաբաժան>> մեթոդական հնարը:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ զգացի	Ի՞նչ հասկացա

Որպես տնային աշխատանք կարելի է հանձնարարել տանը նկարել իրենց նախընտրած հերոսին, նրա մասին գրել մի հանելուկ կամ փոքրիկ բանաստեղծություն:

Երեխաներին հոգեհարազատ են նկարագրական տեքստերը, հեքիաթները, հանելուկները և պատմվածքները: Դրանց ընթերցումը և վերլուծությունը աշակերտին մեծ հաճույք է պատճառում:

Այսպիսով, երեխաները հասկանում են, որ Մայրենի լեզուն սովորում են ոչ միայն դասերը լավ պատասխանելու համար, այլև գրագետ, օգտակար մարդ դառնալու և շրջապատի հետ արդյունավետ հաղորդակցվելու համար:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Անշուշտ, եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդական ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի զարգացման միջոց: Այդ իսկ պատճառով ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

Բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցած նյութի բովանդակության մասին ընդհանուր, մակերեսային պատկերացում են կազմում: Այդ պատճառով էլ կարևոր է բնագրի՝ որոշակի հանձնարարականներով վերընթերցումը, որի ժամանակ երեխաները պետք է ինչ-որ նորություն գտնեն, բացահայտեն նոր փաստեր, որոնք առաջին ընթերցման ժամանակ չէին նկատել, հակառակ դեպքում վերընթերցումը կվերածվի մեխանիկական ու անհետաքրքիր աշխատանքի: Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասն անարդյունավետ և ձանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով և հոգածությամբ վերաբերվել գրքին, իմանալ գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով վերաբերվել գրադարանի գրքերին: Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը, կարևորի ուրիշին հարգելու հատկանիշը, գնահատի արդարամտությունը: Մերժի բացասական հատկանիշները, անտարբերությունը, եսասիրությունն ու վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ: Դրանք ներառված են պետության կողմից երաշխավորված հատուկ դասագրքերում:







Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթացը՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Որևէ մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքրիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի նկարազարդ էջը: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր տալիս հենց հեղինակին: Հեքիաթի հորինումը

կարելի է կազմակերպել կշռադատման փուլում, երբ երեխաները ամփոփում են իրենց ընթերցած պատմությունը կամ հեքիաթը և վեր են հանում հանում գլխավոր միտքը:

Ինքնուրույն ընթերցանության ժամանակ, ինչպես և մայրենիի դասավանդման ընթացքում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝ ուղորդված ընթերցանություն

- Ընտրովի ընթերցանություն
- Կրկնակի գրառման օրագիր
- Ընդհատված ընթերցանություն:

Մեթոդի ընտրությունը կախված է թեմայից և նպատակից: Նույն թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ՝ կախված նպատակից:

Տեքստի հիմնական գաղափարը հասկանալն ու առանձնացնելը ամենակարևոր հմտություններից է, իսկ տեքստի կառուցվածքային- իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ տարբելակելը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխաները պետք է տարբերակեն նաև կարդացած տեքստի հնչերանգները՝ պատմողական հարցական, հրամայական, թե բացականչական: Աշակերտների միջև պետք է ծավալել զրույց, որպեսզի կիսվեն իրենց տպավորություններով: Այդպիսի զրույց կարդացածի շուրջ կարելի է կազմակերպել թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս: Մեթոդի օգնությամբ կարելի է կազմակերպել հետաքրքիր մտքերի փոխանակման մթնոլորտ, այնպես, որ երեխաները հարգեն միմյանց կարծիքներն ու տեսակետները:

Ուսուցումը տեղի չի ունենում որևէ բան կարդալով կամ պատմելով: Աշակերտը կարիք ունի ոչ միայն գիտելիքների և տեղեկությունների, նաև մտածողության, տեղեկատվության, մշտական և համագործակցային հմտությունների:

Հայտնի փաստ է, որ ընթերցանության կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը: Խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը և բնագրի դրվագների, խնդուկների, մանրապատումների բեմադրությունը: Դրանց անցկացման նպատակն է նպաստել աշակերտների կարդալու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դյուրամարս և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանականացումը՝ տառ- բառ- բառակապակցություն նախա-դասություն, ինչպես նաև լուռ ընթեցումից բարձրաձայնին անցումը: Վարժանք-

առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղերն են, որոնց կատարումն հաճույք է պատճառում երեխաներին: Խաղը ցանկացած ուսումնական գործընթաց դարձնում է հետաքրքիր և հաճելի: Անգամ ամենաթույլ երեխան խաղի տեսքով կազմակերպված դասին հաճույքով է մասնակցում: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար օգտակար է կիրառել մեթոդը: Այս մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ զրույցը, բառային աշխատանքը, նյութի մշակումը, բովանդակության վերարտադրումը և ամփոփումը կամ տրամաբանական եզրակացությունը:

Դասարանում կատարվող յուրաքանչյուր նյութի ուսումնասիրությունը մենք ավարտում ենք ամփոփումով: Բնագրի վրա տարվելիք աշխատանքներն ավարտելուց հետո այն ամփոփում ենք՝ հիմնականում կանգ առնելով երեք կարևոր հարցերի վրա, դրանք են՝

ա) նյութի ուսումնասիրությունից ստացած գիտական, ճանաչողական նոր տեղեկությունները,

բ) նյութից հանվող դաստիարակչական-բարոյական հետևությունները,

գ) նյութի լեզուն՝ բառերը, դարձվածքները, արտահայտությունները:

Առավել հետաքրքիր է մեթոդը: Այս դեպքում արդեն ընտրված ստեղծագործությունից առանձնացվում է մի հատված կամ պարբերություն:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն հերոսի խոսքերը կամ այն հատվածը, որը իրեն ավելի է դուր գալիս և այլն: Սա ստիպում է աշակերտին ոչ թե մեխանիկորեն կարդալ, այլև մտածել կարդացածի շուրջ, օգնում է ևս մեկ անգամ վերլուծել նկարագրված դեպքերը տրամաբանել ու նոր ընտրել ու կարդալ տեքստի որոշակի հատվածը:

Պետք է ուշադրություն դարձնել կարողություններին և հմտություններին, որպեսզի աշակերտը կարողանա սահուն և հասկանալով ընթերցել հանձնարարված նյութը, տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմության դեպքերը, նկարագրել և բնութագրել գործող անձանց, տրամաբանված ինքնուրույն խոսք կառուցի, ներկայացնի իր հնարավոր գործողությունները համանուն իրավիճակում, գործնականում կիրառի բառակազմական հմտությունները: Կարևոր է կարդացած գրականությունից նրա մոտ ձևավորվի ճիշտ արժեքային համակարգ. գնահատի գործող անձանց հատկանիշները, վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ, կարևորի մարդասիրությունը ազնվությունը, սրտացավությունը, ուրիշին օգնելու ձգտումը, ձգտի ազնիվ ու մարդկային լինել իր արարքների մեջ, գնահատի ուրիշին օգնելու պատրաստակամությունը:

Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք խորությամբ և ճշտությամբ ընկալել և հասկացել են ընթերցած ստեղծագործության գաղափարը, բովանդակությունը, ենթատեքստը, տեղի ունեցող դեպքերը, դրանց մեջ պատճառահետևանքային կապերը, ինչպես և հեղինակի վերաբերմունքը հերոսների նկատմամբ:

Ինքնուրույն ընթերցանության դասի ժամանակ կան մեթոդներ, որոնք հարմար են կիրառել խթանման փուլում՝

1. Մտագրոհ,
2. Խմբավորում,
3. Պրիզմա,
4. Հինգ րոպեանոց շարադրանք,
5. ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները:

Այս մեթոդներն ու մեթոդական հնարները կօգնեն ընթերցանության ուսուցմանը: Հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում հետևյալ մեթոդները՝

1. T-աձև աղյուսակ
2. Ձրույց
3. Վենի դիագրամ
4. Փոխգործուն նշանների համակարգ
5. Բանավեճ
6. Հանառոտ դասախոսություն
7. Ապագայի անիվ
8. Խորանարդում
9. Խճանկար
10. Ուղղորդված ընթերցանություն:

Այս մեթոդները հարմար է կիրառել ոչ միայն ինքնուրույն ընթերցանության ժամանակ, այլ նաև մայրենիի դասերին:

Կշռադատման փուլում հիմնականում կիրառվում են հետևյալ մեթոդները՝

1. Քառաբաժան
2. Կողմ-դեմի աղյուսակ
3. Խմբային աշխատանք
4. Բանավեճ

Ընթերցանության ժամանակ և գրքի հետ աշխատելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, կախված նյութի բովանդակությունից և նպատակից:

Այսօր պետությունը դպրոցին լուրջ հանձնարարություն է տվել. հասարակությունը ուսուցման արդյունքում պետք է ստանա զարգացած, կիրթ, բարոյապես ձևավորված և սոցիալապես ակտիվ քաղաքացիներ, որոնց համար սովորելու ձգտումը անհատի կայուն որակներից է: Բոլոր ժամանակների և ժողովուրդների հանճարեղ գրողներին ու բանաստեղծներին մտահոգություն է պատճառել մարդկանց բարքերի անկումը, և նրանք միայն մի դեղ են առաջարկել՝ ինքնակատարելագործում: Դաստիարակչական գործընթացը կառավարել նշանակում է ոչ միայն զարգացնել ու կատարելագործել մարդու մտավոր ու ֆիզիկական բնածին ունակությունները, այլև ձևավորել անընդհատ ինքնակատարելագործման պահանջմունք: Այդ պահանջմունքի բավարարումն անհնար է առանց ընթերցանության: Կարևորագույն խթանը ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է: Եթե աշակերտը ունի դրդապատճառներ, ուրեմն ուսումնական գործունեությունը կհաջողվի:

Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման բոլոր մեթոդները օգնում են սովորողի գործուն մասնակցությանը, բանավոր և գրավոր խոսքի, ստեղծագործական մտքի զարգացմանը: Մեթոդները նպաստում են լեզվական կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության մեջ և յուրաքանչյուր մեթոդ պետք է ծառայեցնի նյութի լավ յուրացմանը: Ի վերջո կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով: Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհ և որևէ մեթոդ, եղանակ, սկզբունք, հնար չի կարող համարվել միակ ճշմարիտը: Ավելին, առաջարկված մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ, մասնավորապես՝ ժամանակային առումով: Այդ դեպքում կարելի է կիրառել ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այլ դրա առանձին տարրեր կամ հարմարեցնել տվյալ իրավիճակին: Այս բոլոր մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին և աշակերտներին փոխգործակցել միմյանց հետ: Ուսուցիչներն ու աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն է, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են: Այսինքն՝ աշակերտը պետք է հանդես գա ոչ թե իբրև գիտելիքների ձեռքբերման գործընթացի պասիվ մասնակից, այլ ակտիվ գործընկեր,

գիտելիքներ ձեռք բերող, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն:

Ուսուցումը պիտի իրականացվի իբրև ակտիվ, երկկողմանի մտավոր գործողություններով հագեցած մի գործընթաց, որի ժամանակ ոչ թե ուսուցիչը գիտոլիքներ է հաղորդում, այլ աշակերտը ուսուցչի մանկավարժական վարպետության շնորհիվ ինքն է ձեռք բերում այդ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները՝ անցնելով վերը նշված ճանապարհը: Այսինքն՝ ուսումնական գործունեության համար պատասխանատու են և՞ ուսուցիչը, և՞ աշակերտը:

Ընթերցանության նկատմամբ սերը ձևավորվում է դպրոցում, ուրեմն պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գրականություն սիրող, հասկացող ու գնահատող, մշտապես կարդացող, իր հմտությունները կյանքում կենսագործող մարդ դաստիարակելու համար: Ընթերցանության ճիշտ կազմակերպված դասերն աշակերտների մեջ սեր են արթնացնում ընթերցանության նկատմամբ,բացահայտում երեխաների հետաքրքրություններն ու հակումները, դաստիարակում ընկերասիրություն, հայրենասիրություն, ձևավորում գեղագիտական հայացքներ, բարոյական արժեքներ, ընդլայնում ու խորացնում այն գիտելիքները, որ նա ստացել է ինքնուրույն ընթերցանության դասերին:

Այս մեթոդների կիրառման շնորհիվ մենք զարգացնում ենք ոչ միայն երեխաների մոտ ընթերցանությունը, այլ նաև սովորեցնում ենք վերարտադրել ընթերցած նյութը, արտահայտելով միաժամանակ իր սեփական մտքերն ու դատողությունները: Ակտիվ մեթոդների օգնությամբ կարելի է վեր հանել աշակերտների ունեցած գիտելիքները և սովորեցնել այդ գիտելիքները դարձնել կարողություններ և հմտություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման գործընթացում գրական ունկնդրումը համարվում է ուսուցման կազմակերպման մի տեսակ, որի ընթացքում ստեղծված ազատ, անկաշկանդ միջավայրում խոսքի յուրացումը սերտորեն կապվում է երեխային առօրյա գործունեության հետ: Ստեղծված միջավայրում սովորողն առանց սխալվելու վախի արտահայտում է իր մտքերը, կարծիքներն ու հույզերը: Իսկ գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում:

Ունկնդրման ժամերի քննարկումները ցույց են տալիս, որ ընթերցումը պետք է կազմակերպել այնպիսի մեթոդներով, որպեսզի ուսուցումը արդյունավետ ու ձանձրալի չլինի: Ընթերցելու մեթոդիկայի ճիշտ ընտրությունը մեծապես նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը, որը համարվում է մեր ցանկալի արդյունքի բարձրակետը:

Առաջին դասարանում գրական ունկնդրումները ցույց են տալիս, թե որ բաղադրատարրերն են դառնում ընթերցանության մեթոդի հիմքը: Դրանք են՝

- Զրույցը
- Բնագրի ընթերցումը
- Բառային աշխատանքը
- Պատմումը
- Ամփոփումը

Իսկ սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած այն որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է լավ ընթերցանությունը: Այդ որակներն են՝

- Ճիշտ կամ անսխալ կարդալ
- Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ
- Վարժ կամ սահուն կարդալ
- Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ
- Արագ կարդալ

Իսկ ցանկացած ընթերցանություն համարվում է նպատակային և գիտակցված, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Գրական ունկնդրումն ու ինքնուրույն ընթերցանությունը ոչ մի տարիքում ինքնանպատակ չպետք է լինի: Նրանց միջոցով ընթերցողը միշտ տեղեկություններ պետք է քաղի, վերլուծի, համադրի և ընդհանրացնի, յուրացնի բարոյական արժեքները, կրթվի և դաստիարակվի համամարդկային արժեքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006թ.
2. Ջ. Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998թ.
3. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Հ. Խաչատրյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Ուսուցչի ձեռնարկ, II մաս
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործու: <<Նախաշավիղ>>, Երևան, 2010
5. Գ. Կանեցյան, Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան 1990
6. Մանկավարժություն, Երևան, 2007թ.
7. Ս. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980թ.
8. Կրթության ազգային ինստիտուտ, Վեց տարեկան դպրոցականների մեկնարկը, Երևան 2007թ.